«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման ՝Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկան ՝ Մայրենի լեզու (դասվար)
Հետազոտող ուսուցիչ ՝Մարիամ Թախտայան

Ուսումնական հաստատություն ՝«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ՝ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----------5

1.1 ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱՋԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒ---------- 5

2.ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ---------- 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը: Նախաայբբենական շրջանը հստակ խնդիր ունի՝ երեխաներին նախապատրաստել տառուսուցմանը: Առաջին դասարանի սովորողների ուսուցման կազմակերպման և հետագայում արդյունավետ ուսուցու ապահովելու համար այն կարևորագույն խնդիրն է: Եթե նախաայբբենական փուլում երեխան հիմնավոր աշխատեց, այբբենական շրջանը ավելի հանգիստ ու թեթև կանցնի՝ առանց ավելորդ ջանքերի:

Մինչև տառ սովորելը առաջին դասարանցին պետք է հասկանա՝ ինչ է հնչյունը, պետք է լսի ու արտասանի 5-6 հնչյուն ունեցող բառերի բոլոր հնչյունները: Ինչպես մարդկությունն է հասել տառի գաղափարին և հայտնագործել այն, այդպես էլ երեխան պետք է անի: Թերևս հարկ է նշել, որ գրաճանաչության շրջանի խնդիրների արդյունավետ լուծումն ուսուցչից պահանջում է առավել շատ հենվել յուրաքանչյուր երեխայի հատուկ զգացմունքակամային որակների վրա՝ կարևորելով ուսուցմն հաճելի, ստեղծագործական, արդյունավետ դարձնելու հանգամանքը: Գրելու գործընթացում երեխաների մոտ պետք է ձևավորել համոզմունք, որ գեղեցիկ, ընթեռնելի ձեռագիրն իր գրածը ընթերցողի նկատմամբ հարգանքի դրսևորումն է, իսկ առաջին դասարանցու գրավոր աշխատանքի առաջին ընթերցողն ուսուցիչն ու ծնողն են: Դեռևս գրաճանաչության նախայբբենական շրջանում իրականացվում է գրելու կարողության ձևավորման ուղությամբ նախապատրաստական աշխատանքներ:Այդ շրջանի ուսուցողական խնդիրներից է մատները գրելուն նախապատրաստելը, տառամասնիկների գրության և տողի վրա կողմնորոշվելու կարողության ձևավորումը: Գրելու կարողության ձևավորմանն առնչվող որոշ խնդիրներ հիմնականում լուծվում են գրաճանաչության այբբենական շրջանում: Վերը նշված առաջնահերթություններով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու կարևորությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիներն առաջին դասարանում:

Նպատակից բխել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել թեմայի շուրջ մանկավարժական գրականության վերլուծություն,

2.Ներկայացնել նախաայբբենական փուլի կազակերպման կարևորությունն ու առանձնահատկությունները, ինչպես նաև խոսքի զարգացման աշխատանքները գրաճանաչության նախաայբբենական շրջանում

3. ներկայացնել նախապրբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիներն առաջին դասարանում։

<u>Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.</u>

- Վերլուծություն,
- Գործնական աշխատանք։

<u>Հետազոտության կառուցվածքը։</u> Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական մասից, գործնական առաջադրանքներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։ Համակարգչային շարվածքով կազմում է 21 էջ։

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն:[4]

Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն… Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու

կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ:[1]

Սկսած նախապայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն:

Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը»: Արդեն հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար աշակերտներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: Աշակերտներին կարելի է առաջարկել իրենց խոսքը կառուցել շաղկապների միջոցով (Գիրքը կարդալու համար է, իսկ գրիչը՝ գրելու, Ինձ դուր չեկավ տղայի արարքը, որովհետև նա դրանով ցավ պատճառեց մեկ ուրիշին և այլն): Խոսքի

[1] 1.Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի Զարգացում, բուհական ձեռնարկ, Եր., 2014:

կառուցման այս եղանակը կնպաստի աշակերտների տրամաբանված խոսքի զարգացմանը: Բառի մասին գաղափար տալուց հետո կատարում ենք եզրահանգում, որ յուրաքանչյուր առարկա ունի իր անվանումը, յուր բառ ունի իր նշանակությունը, իմաստը: Երեխաներին բացատրում ենք, որ բառը պետք է անպայման իմաստ ունենա, որ հնչյունների ամեն կապակցություն բառ չէ: Կարելի է աշխուժություն մտցնելու համար ստեղծագործել և գրել փոքրիկ բանաստեղծություն բառի իմաստի վերաբերյալ. Դասարանը սենյակ է, որտեղ մենք սովորում ենք,/Գիրքը գիտելիք է, մենք այն սիրով կարդում ենք, /Գրիչով մենք գրում ենք մաշտոցյան տառերը, / Կավիճով գրում ենք նոր սովորած բառերը: /Բայց այս ի՞նչ տառեր են իրար միացել՝ / Կուպ, տեպ, կա, պա, մի մեծ աղմուկ բացել, / Չենք հասկանում ոչինչ՝ ի՞նչ են ուզում ասել, /Սաստիկ շտապելուց բառիմաստն են կորցրել:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները: Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների դուրսգրման միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցականին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, բառարանում գտնել նորածանոթ բառի բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակերտի մեջ ձևավորվի նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողություն: Նմանատիպ աշխատանք պետք է կազմակերպել թե՛ դասարանական, թե՛ արտադասարանական ընթերցման ժամանակ: Այս տարբերակը լայն հնարավորություն է տալիս աշակերտին անընդհատ և բազմակողմանիորեն հարստացնելու բառապաշարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնառության տարիներին ուսումնասիրվում են տարբեր առարկաներ, որոնց դասագրքերը մի մեծ բառարան են բառապաշարի հարստացման համար: Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը, սակայն այդ ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտի դատողական մտածողությանը: Իհարկե, հետագայում աստիճանաբար պատկերներով աշխատելու ծավալը պետք է կրճատվի: Տարրական

դպրոցում կարևոր խնդիր է հիշողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Կրտսեր դպրոցականներից շատերն օժտված են մեխանիկական հիշողությամբ և ուսուցման ընթացքում բավականին հեշտ անգիր են անում ուսումնական տեքստերը: Հաճախ են հանդիպում այնպիսի երեխաներ, ովքեր նյութը վերարտադրելիս այն կարդում են «օդում»՝ դասագրքի նյութը մտովի բերելով տեսողական դաշտ:[2] Այս երևույթը դժվարության է հանգեցնում միջին դասարաններում, քանի որ ուսուցանվող նյութերն աստիճանաբար դառնում են բարդ ու ծավալուն: Աշակերտները սկսում են բառացի վերարտադրել իրենց մտապահածը: Նրանք չեն ձգտում բացահայտել երևույթի էությունը, այլ հաջողությամբ կրկնօրինակում են: Հետևաբար կրտսեր դպրոցում պետք է կատարելագործել հիշողությունը, յուրացնել տալ մտապահման ավելի իրատեսական մեթոդներ: Երեխան պետք է սովորի իմաստավորել ուսումնական նյութը, հասկանալ, քանի որ մտածելու, իմաստավորելու ընթացքում նյութն ամրակայվում է երեխայի հիշողության մեջ: Մտապահման գործընթացը պետք է անպայման վերահսկվի ծնողների և ուսուցչի կողմից: Նյութը հասկանալով մտապահելու կարողությունը զարգացնելու համար ուսուցիչը տեքստը բաժանում է իմաստային մասերի, քննարկում և բացատրում:

Իմաստավորված ուսուցման դեպքում նյութը յուրացվում է ավելի հեշտ և վերարտադրելիս աշակերտների խոսքը կառուցվում է ավելի ճիշտ ու հասկանալի: Տարրական դպրոցում ձևավորելով նյութի մտապահման այս կարողությունը՝ միջին դպրոցականն արդեն չի դժվարանա ուսումնական ծավալուն տեքստերի մտապահման ու վերարտադրման ժամանակ: Աշակերտների խոսքը զարգացնելու համար հանձնարարվում են կազմել նախադասություններ, հորինել պատմություններ որևէ նկարի, սեփական դիտումների վերաբերյալ: Հետաքրքրություն մտցնելու համար խմբակային կամ անհատական տարբերակով կարող ենք տալ ուսուցանվող թեմային վերաբերվող անգույն նկար, հանձնարարել, որ նրանք հորինեն պատմություն նկարի շուրջ, մեկնաբանեն այն, ապա գունազարդեն նկարը, քանի որ նկարելու ընթացքում երեխան ևս մեկ անգամ վերհիշում է կարդացածը, մտքում պատմում, մտորում երևույթի շուրջ, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխայի ներքին խոսքը: Այս եղանակով կզարգանա աշակերտների վերացական մտածողությունը, և նրանք իրենց մտածածն ու զգացածը կարող են ներկայացնել ոչ միայն նկարի միջոցով, այլ նաև խոսքով: Ավարտված

[2] 1.Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի Զարգացում, բուհական ձեռնարկ, Եր., 2014:
2.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015:

աշխատանքները կպահվեն հատուկ թղթապանակում կամ ստեղծագործական անկյուն կստեղծվի դասարանում: Կարծում ենք՝ նմանատիպ աշխատանքը կաշխուժացնի աշակերտներին և կխթանի նրանց ստեղծագործելու ցանկությունը: Ուսուցումը տանելով խաղին զուգահեռ, կոգևորենք երեխային՝ սովորելը նրա համար դարձնելով ուրախ ու հետաքրքիր զբաղմունք: Նմանատիպ աշխատանքներ կարելի կազմակերպել նաև տանը՝ համագործակցելով ծնողների հետ: Երեխայի ազատ ժամանակը հետաքրքիր և ուսանելի դարձնելու նպատակով ծնողները ևս կարող են երեխաների հետ զբաղվել նկարների գունավորման աշխատանքներով, նկարների վերաբերյալ պատմություններ հորինել, որի ընթացքում երեխայի մեջ կարող է ձևավորվել անկաշկանդ խոսելու կարողություն: Երեխային ոգևորելու համար այդ նկարները կարելի է հավաքել մի առանձին թղթապանակ – հավաքածուում: Նմանատիպ աշխատանք կարելի է իրականացնել բնության երևույթների, տարվա եղանակների թեմայի ուսուցման ժամանակ՝ նկարը գունազարդելով դասի բնութագրական հատվածներին համապատասխան: Այս տարբերակը կարելի է կիրառել նաև էլեկտրոնային ուսուցման միջոցով: Այսպես՝ էկրանի վրա տեղադրված անգույն նկարը գունավորում ենք խոսքային միջոցներով (բնութագրական բառերը կարող են ասել գրքից, կամ գրված լինեն մի անկյունում, ընդ որում՝ յուրաքանչյուր բառ կունենա իր երանգը) և ստանալով գեղեցիկ պատկեր՝ կատարում ենք համեմատություն անգույն ու արդեն գունազարդված նկարների միջև՝ ակնառու դարձնելով անհրապույր խոսքի և գեղեցիկ խոսքի տարբերությունը: Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին (խոսքի տեմպ, ռիթմ, տրամաբանական շեշտ, մեղեդայնություն և այլն): Աշակերտները պետք է հասկանան, որ միալար ու անկենդան խոսքը, որը չունի զգացմունքային տարրեր, արտահայտիչ չէ, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար:

Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ: Երեխաների ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար խմբային համագործակցության միջոցով հորինում ենք բանաստեղծություններ, զվարճալի պատմություններ, հեքիաթներ և այլն: Ջ.

Ռոդարին աշակերտների ստեղծագործական երևակայությունը զարգացնելու համար առաջարկում է «ստեղծագործական երևակայության երկանդամության» տարբերակը: «Մի բառն այն ժամանակ է կենդանանում, երբ հանդիպում է մյուսին, որը դրդում, ստիպում է առաջինին սովորության սահմաններից դուրս գալու, իմաստային նոր հնարավորություններ բացելու…»: Ռոդարին առաջարկում է ընտրել իմաստով իրարից շատ տարբեր 2 բառ և ձգտելով այդ 2 բառերի մեջ ստեղծել որևէ կապ՝ ակտիվացնել աշակերտներիի երևակայությունը (այդ բառերը կարող են ասել տարբեր աշակերտներ, վիճակահանություն կատարել և այլն): Կարծում եմ՝ այս տարբերակը բավականին կզարգացնի աշակերտների երևակայությունը և կխթանի ստեղծագործելու ցանկությունը, իսկ ուսուցումը կդառնա հետաքրքիր ու գրավիչ:

Աշակերտների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև ընդօրինակման և ստեղծագործական բնույթի արտագրությունները, շուտասելուկների, ուղղախոսության կանոնների ճիշտ կիրառմամբ բառախաղերի արտասանությունը, ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ կարծիքների և տպավորությունների փոխանակումը, հիշողությամբ կամ նկարով պատմելը, նյութի վերարտադրելը նույնությամբ կամ ստեղծագործաբար: Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարանում: «Գրքերի հետ երեխաների վճռորոշ հանդիպումը դպրոցական նստարանին է տեղի ունենում: Եթե այդ հանդիպումը ստեղծագործական մթնոլորտում է ընթանում, ուր գլխավորը կյանքն է, ոչ թե անգիր անելը. ապա կարող է կարդալու համն առնել», այլապես «երեխան կարող է ընթերցանության տեխնիկային տիրապետել, սակայն կարդալու ճաշակ ձեռք չբերել»: Գրքերի թեման պետք է համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին, լինի ոչ ծավալուն: Ընթերցանության և ուսուցման համար ընտրված թեմաները պետք է լինեն հայրենիքի, հերոսական սխրանքների, աշխատասիրության, բարեկամության, պատվախնդրության, բարության, ճշմարտախոսության, պատասխանատվության վերաբերյալ, որպեսզի ուսուցման ընթացքում հնարավոր լինի երեխայի անձի ձևավորումն իրականացնել բարոյական բարձր չափանիշներին համապատասխան: «Անձի աշխարհայացքի ձևավորումը տեղի է ունենում ինչպես առօրյա կյանքի և գործունեության ընթացքում, այնպես էլ հատուկ դաստիարակչական աշխատանքի միջոցով: Դաստիարակչական ներգործությունների

կազմակերպվածությունն ու բովանդակությունն են որոշում անձի աշխարհայացքի տիպական բնութագիրը»: Դասագրքի բնագրերը և ինքնուրույն ընթերցանության նյութերը պետք է լինեն նպատակային. դրանց միջոցով աշակերտների մեջ պետք է ձևավորվեն բարոյական բարձր արժեքներ, բարություն, ազնվություն, մեծահոգություն, լավատեսություն, հանդուրժողականություն, ազգային ինքնագիտակցություն և այլն: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել ընթերցված նյութի զգայական կողմին՝ կարծիքներ և տպավորություններ փոխանակել, կապել այն երեխայի սեփական փորձի հետ՝ այդ ողջ ընթացքում զարգացնելով խոսքը, երևակայությունը և մտածողությունը: Իսկ արտադասարանական ընթերցանության միջոցով պետք է զարգացնել գրքերի բովանդակությունն ինքնուրույն ընկալելու և ներկայացնելու կարողությունը: Աշակերտների տրամաբանական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով ևս պետք է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում: Տարրական դասարաններում ուսումնական նյութն անցնելիս ուսուցիչը սովորեցնում է դուրս գրել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ձևավորում հերոսների արարքների դրդապատճառը որոշելու կարողություններ, պահանջում բանավոր կամ գրավոր արտահայտել իրենց կարծիքը հերոսների վարքագծի կամ դեպքերի վերաբերյալ: Ուսուցչի կողմից պետք է մշակվի նաև խոսքային տարբեր իրավիճակներում համապատասխան տարբեր ոճերով կապակցված խոսք կառուցելու կարողություններ. էքսկուրսիաների, դիտումների միջոցով կառուցել նկարագրական խոսք բնության, այս կամ այն առարկայի կամ երևույթի վերաբերյալ՝ կիրառելով ստեղծագործական և երևակայական կարողություններ, կազմել դատողական խոսք կարդացածի կամ լսածի վերաբերյալ և այլն: Մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում տարրական դասարաններում անհրաժեշտ է զարգացնել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ: Նրանք պետք է կարողանան տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, բնության նկարագրության հատվածները, կարողանան հակադրել հերոսներին և նրանց արարքները, վերհանեն դրանց դրդապատճառները, դրսևորեն գնահատողական վերաբերմունք: Աշակերտները կարող են բանավիճել հերոսների վարքագծի, ինչպես նաև մինչ այդ իրենց ձեռք բերած փորձի և տեսակետների վերաբերյալ: Նրանք պետք է կարողանան տեքստի բովանդակությունը վերարտադրել

դատողական տարրերով, իրենց վերաբերմունքը հաստատելու համար բերել փաստարկներ: Այս ամենը տարրական դասարաններում պետք է իրականացվի ուսուցչի ուղղորդմամբ, որպեսզի միջին դպրոցում աշակերտներն ավելի անկաշկանդ ու հիմնավորված կարողանան ներկայացնել իրենց տեսակետներն ու կարծիքները, նրանց խոսքը ունենա տրամաբանված ու կուռ կառուցվածք: [3]

1.2.ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Գրելու կարողությունների ձևավորման հարցում պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատականության առանձնահատկությունը, կարևորել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ զննականությունը, գիտակցությունը և այլն:Միաժամանակ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխայի ձեռագիր խոսում է նրա հոգեկան գործընթացի զարգացման վիճակի մասին:Տառերի չափի ու դիրքի ընդծված խախտումներ ունեցող երեխայի ձեռագրի ձևավորման ուղղությամբ ուսուցչի աշխատանքն արդյունք չի տալիս և հարկ է առաջանում դիմել հատուկ մանկավարժի օգնության:

Գրելու կարողությունների ձևավորմանը նպաստում է նաև ծեփամածիկով տառերի պատրաստելը և օդում ձեռքի շարժումով գրելը:Ինչ խոսք,շատ կարևոր է նկարելը, գունավորելը,որոնք մեծապես նպաստում են երեխայի ձեռքի մանր մոտորիկայի զարգացմանը:Բացի այդ շարժական խաղերը,որոնցում առկա են մատների վարժանքի էլեմենտներ, մեծապես օգնում են երեխային աննկատ կերպով զարգացնելու ձեռքի մատների մկանային համակարգը ,որն էլ էապես նպաստում է գրելու գործընթացի զարգացմանը :Այդ խաղերից է<<Անձրև>>-ը,որը սիրով են խաղում երեխաները:

Գրելու կարողությունների ձևավորմանը զուգահեռ պետք է աշխատանք տարվի վայելչագրության պահպանման ուղղությամբ : Նշենք , որ վայելչագրության պահպանման համար ուսուցչին և աշակերտին օգնության են գալիս օժանդակ տողերով տետրերը : Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են

[3] 3.Էդիլյան Գ., Գիտությունը և դպրոցական պարապմունքների նպատակները, Արարատ, 1913:
4.Մանդինյան Ա., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար, Թիֆլիս, 1876:

կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնաարդյունքի հստակ գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Նպատակի հստակ ձևակերպումը և գիտակցումը բերում են որոշակի գործողությունների կատարման : Աշակերտը գիտակցում է իր դերը տվյալ գործողությունները իրականացնելիս : Նպատակադրման գործընթացը խմբային գործունեություն է, յուրաքանչյուր աշակերտ մասնակից է, ակտիվ գործիչ, զգում է իրեն որպես ընթհանուր ստեղծագործության իրականացնող: Աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել, իմանալով, որ իրեն կլսեն և կընկալեն: Սովորում են լսել մյուսներին, առանց որի փոխազդեցություն չի ստացվի: Նպատակադրման նկատմամբ հատկապես այսպիսի մոտեցումն արդյունավետ է ու հեշտ իրագործելի և նպատակին հնարավոր է հասնել բազմաթիվ խնդիրներ իրականացնելու ճանապարհով: Յուրաքանչյուր խնդիր առաջադրվում է ընդհանուր նպատակին հասնելու հաշվարկով: Այս գործընթացը կոչվում է ուսուցանման մարտավարություն:[4]

Ձեռքի տակ ունենալով հստակ նյութ, ելնելով հստակ պայմաններից՝ դասարանի աշակերտների կազմը և քանակը, ուսումնական միջոցների առակայությունը, տարբեր տեսակի ձեռնարկներ և այլն, ուսուցիչն ընտրում է այնպիսի մեթոդներ և դրանց հետ աշխատելու հնարքներ, որոնք կնպաստեն նյութի յուրացմանը, այսինքն լուծվում է միավոր խնդիր: Հետևաբար խնդիրը հանդիսանում է ուսուցման ընդհանուր նպատակին հասնելու փուլ: Այսպիսով դասի նպատակի ձևակերպման ժամանակ ուսուցիչը պետք է նշի այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք պետք է ձևավորվեն կամ կատարելագործվեն դասի ընթացքում, այնուհետև նշված նպատակը հստակեցվում է գործնական խնդիրներով: Մեկ նպատակը կարելի է իրականացնել մի քանի դասի ընթացքում, իսկ գործնական խնդիրները լուծվում են կոնկրետ դասի ընթացքում: Ճիշտ կառուցված դասապրոցեսում տարբերակում ենք դասի խնդրի 3 տիպեր՝

[4] 1.Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի Զարգացում, բուհական ձեռնարկ, Եր., 2014:
2.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015:

1. **Գիտելիքների ստացման խնդիրներ:** Միտված են որևէ գործողության կատարման հմտությունների ուսուցմանը: Օրինակ՝ գրագետ գրելը, քարտեզով կողմնորոշվելը, կողմնացույցից օգտվելը, Համացանցից օգտվելը, անհրաժեշտ տեղեկատվության փնտրումը և այլն:

2. **Հմտությունների ձեռքբերման խնդիրներ:** Այս խնդիրները պահանջում են տարբերել ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարումը սխալ կատարումից: Օրինակ՝ տարբերեն 1-ին տիպի խնդիրների ճիշտ կատարումը սխալից:

3. **Դիրքորոշման ձևավորման խնդիրներ:** Այս խնդիրները պահանջում են ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարման առանձնահատկությունների սահմանման, մեկնաբանման և հիմնավորման կարողություններ: Ուսուցման խնդիրը այնպիսի գիտելիքների և կարողությունների շարադրումն է, որոնցից աշակերտները կարող են օգտվել կամ դրանց վրա հիմնվել ուսումնառության տվյալ տեսական և գործնական փուլի ավարտից հետո:

Ճիշտ ձևակերպվելու դեպքում խնդիրները հնարավորություն են տալիս փոխանցել հաղորդագրություններ՝ ուսուցչից աշակերտին, միևնույն և տարբեր ուսումնական հաստատությունների ուսուցիչների միջև: Հատկանշական է, որ խնդիրների ճիշտ ձևակերպմամբ աշակերտները ստանում են կոնկրետ պարտավորություններ. ուսուցիչը կազմակերպում է կրթական գործընթացը՝ դասախոսություններ, մեթոդական ցուցումներ, կոնսուլտացիաներ, իսկ աշակերտները, որոնք ի սկզբանե գիտեին, ինչի են ձգտում, խրախուսվում են մասնակցլու ինքնուսուցմանը: Խնդիրների ձևակերպումն ստիպում է տարբերակել առաջնահերթությունները և սահմանել կարևոր տեղեկատվությունն ու հմտությունները: Խնդիրներին անտեղյակ աշակերտներն ընկնում են անորոշության մեջ, ինչն էլ գործնականում նվազեցնում է յուրացվող գիտելիքների ծավալն ու խորությունը:

Եթե դասի խնդիրները վերջնակետ են, որտեղ ձգտում են հասնել ուսումնական գործընթացի մասնակիցները, ապա դասի պլանը այդ վերջնակետին հասնելու երթուղին է, իսկ գնահատումը հնարավորություն է տալիս որոշել հասել են վերջնակետին, թե՞ ոչ: Լավ պլանավորումը ներառում է 3 բաղադրիչներ՝

1. Որո՞նք են ուսուցման նպատակները (գիտելիքներ, հմտություններ և կարողություններ):

2. Ինչպիսի՞ն է դասի կառուցվածքը:

3. Ինչպե՞ս պետք է գնահատել աշակերտների գիտելիքները և հմտությունները:

Աշակերտները պետք է իմանան, որ գնահատականը միշտ կախված է դասի խնդիրների կատարումից։ Յուրաքանչյուր դասի նպատակի և խնդիրների ձևակերպումից հետո, անհրաժեշտ է որոշել դասավանդման մեթոդները և դասի կառուցվածքը։[2]

Նպատակները պետք է համապատասխանեն յուրաքանչյուր սովորողի կարողություններին ՝ լինեն ոչ այնքան բարդ, որ երեխաներից մեծ ջանքեր պահանջվի , ոչ այնքան պարզ ,որ երեխայից ջանքեր չպահանջվի , աշակերտների կողմից ընկալելի լինեն, առաջընթացային և ճկուն լինեն, այսինքն արձագանքեն պայմանների փոփոխությանը և նպատակին հասնելու հնարավորություններին։ Սակայն նույնիսկ նպատակների ամենակատարյալ համակարգը նվազ արդյունավետություն կունենա, եթե ուսուցիչն այդ նպատակներին աշակերտների գործողությունների միջոցով հասնելու ճանապարհների վերաբերյալ ճշմարիտ պատկերացումներ չունենա։ Ուսուցիչը և աշակերտը հանդիսանում են նպատակի իրականացման սուբյեկտներ և այդ սուբյեկտների գործունեությունների համաձայնեցումը հանդիսանումէ մանկավարժական հմտության չափանիշներից մեկը։ Արդի մանկավարժությունը պահանջում է նպատակների հստակ ձևակերպում և կատարման պարզություն։ Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել գլխավորն առանձնացնելը, այսինքն ուսուցման նպատակներն ընտրելը։ Որպեսզի ուսուցչի նպատակները դառնան նաև աշակերտների նպատակները, անհրաժեշտ է օգտագործել նպատակադրման հնարներ։ Վերջիններս դասակարգվում են՝

1. Տեսողական- Թեմա-հարց

- Հասկացությունների հետ աշխատանք
- Վառ կետի իրավիճակ
- Բացառում
- Կռահում
- Խնդրահարույց իրավիճակ
- Խմբավորում

2. Լսողական - Ամփոփիչ երկխոսություն

- Գտնել բառը
- Բացառում
- Նախորդ դասի խնդիր։[5]

[5] 3.Էդիլյան Գ., Գիտությունը և դպրոցական պարապմունքների նպատակները, Արարատ, 1913։
4.Մանդինյան Ա., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար, Թիֆլիս, 1876։

Գործնականում նպատակադրման բոլոր հնարները հիմնված են երկխոսության վրա, դրա համար էլ շատ կարևոր է հարցերը գրագետ ձևակերպել, աշակերտներին սովորեցնել ոչ միայն այդ հարցերին պատասխանել, այլ նաև նոր հարցեր մտածել: Նպատակն անհրաժեշտ է գրել գրատախտակին: Այնուհետև այն քննարկվում է, ընդ որում այդ ընթացքում կարող է պարզ դառնալ, որ այն միակը չէ: Քննարկումից հետո պետք է առաջադրել կատարման ենթակա գործողությունները՝ ընթերցել դասը, համառոտագրել, լսել զեկույցը, կազմել աղյուսակ, դուրս գրել անծանոթ բառերը և այլն:

Կազմակերպման տարբեր եղանակներով տարատեսակ առաջադրանքներ կատարող աշակերտները բնականաբար չեն կարող միաժամանակ ավարտել իրենց աշխատանքը: Շատ ուսուցիչներ վախենում են նման դեպքերում առաջացող «անգործության ընդմիջումներից»: Այս մոդուլի նպատակն է ուսուցիչներին ներկայացնել կարճ հանձնարարությունների տիպային օրինակներ և ցույց տալ, թե ինչպես կարելի է մշակել նմանատիպ առաջադրանքներ, որպեսզի նրանք կարողանան կանխել աշակերտների անգործ մնալը և այդ ընդմիջումները լրացնեն աշակերտների ունակությունները զարգացնելուն ուղղված աշխատանքով կամ օգնեն նրանց հետ չմնալ:

Ուսուցման նպատակներին համապատասխան ընթերցանության դասի տիպերը կարելի է բաժանել 2 հիմնական մասի՝ ընթերցողական գործունեության ուսուցողական դասի և ընթերցողական ինքնուրույնության ձևավորման ստուգման դասի; Տիպերի այս դասակարգումն առաջին պլան է մղում սովորողների ուսումնական, ընթերցողական գործունեությունը, որով պայմանավորված է ուսուցման անհատական մոտեցումը: Ուսուցողական դասերը, որոնք, բնականաբար, գերակշռում են ստուգողական դասերի տիպերին, իրենց հերթին ունեն ենթատիպեր՝ թեմայի մուտքի, նոր ստեղծագործության ուսումնասիրության, տեքստերի համեմատական վերլուծության և ամփոփման: Վերջին տասնամյակում փոխվել են նաև դասընթացի անունը՝ ընթերցանություն-մայրենի: Այս անվանումները պայմանավորված են ուսուցման սկզբունքով: Ընթերցանության դասի կենտրոնում գեղարվեստական ստեղծագործությունն է, նրա բովանդակության ու ձևի առանձնահատկությունները, որոնք օգնում են խորհել գրողի վարպետության մասին ընդհանրապես: Մայրենիի դասի կենտրոնում երեխայի անհատականությունն է, ընթերցողի որակները, որոնք կատարելագործվում են ստեղծագործության ներգործությամբ: Տարրական ուսուցման ընթացքում ընթերցանությունը դիտվում է իբրև

բարդ հոգեֆիզիոլոգիական երևույթ, որը ներառում է մի շարք գործընթացներ՝ զգայական, մտածական, կամային: Դա ուղեղի և խոսքային ապարատի աշխատանք է, որ պետք է հմտորեն կազմակերպել: Ընթերցանության դասընթացը, եթե ճիշտ է կազմակերպվում, կարող է ապահովել երեխայի երևակայության, զգացմունքների, մտածողության, հիշողության, խոսքի զարգացումը: Ընթերցանությունը հեղինակի և ընթերցողի զրույցն է, որտեղ մասնակցում է փորձառու միջնորդը՝ ուսուցիչը: Վերոհիշյալից հետևում է, որ մայրենիի ժամերն իրենց բնույթով ուսուցողական են:

Ընկալման այս փուլերի միջոցով գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրությունն իրականացվում է հետևյալ ձևով: Դասի առաջին փուլը նվիրվում է ստեղծագործության զգայական ընկալմանը: Կազմակերպվում է կարճ, նպատակամետ նախապատրաստում նյութի ընկալման ուղղությամբ: Երկրորդ փուլը բովանդակության ընկալումն է: Կազմակերպվում է նյութի ընթերցում հատվածներով և առանձին բաղադրիչների վերլուծություն: Տեքստի մեջ խորամուխ լինելու և ընթերցողական գործունեության նմանատիպ աշխատանքները խորացնում և կոնկրետացնում են տեքստից ստացած նախնական տպավորությունները և ստեղծագործության բովանդակության վերաբերյալ նախնական գուշակությունները:[6]

Դասի պլան

Առաջին դասարան՝ Այբբենարան (Նախաայբբենական շրջան)

Դաի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի թեման՝ Առարկաների հատկություններ(Հաստ, բարակ)

Դասի նպատակն ու խնդիրները .

Նպատակն

Ձևավորել գիտելիքներ այնպիսի հասկացությունների մասին ինչպիսիք են հաստն ու բարակը

Զարգացնել և ամրապնդել ձևավորված գիտելիքները հասկացությունների մասին /հաստ, բարակ/

Համակարգել աշակերտների ունեցած գիտելիքներն առարկաների հատկությունների վերաբերյալ

Զարգացնել տեսողական հիշողությունը,կապակցված խոսք կառուցելու կարողությունը,բանավոր խոսքը և հարստացնել բառապաշարը:

[6] 1.Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի Զարգացում, բուհական ձեռնարկ, Եր., 2014:
2.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015:

խնդիրներ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա և գաղափար ունենա « հաստ» և « բարակ» հասկացության մասին։
Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. որոշել , տարբերակել և նշել հաստ ,բարակ առարկան

2. տարբերակել և գունավորել ըստ գույների տարբեր չափերի առարկաներ

Վերջնաարդյունք

1.Իմանա հաստ բարակ հասկացությունները

2.Տարբերակի և դասակարգի տարբեր առարկաներն ըստ հասկացության /հաստ , բարակ /

Անհրաժեշտ պարագաներ՝ Հաստ ,բարակ ճյուղեր,տետրեր, գրքեր ,ուրվագծված պատկերներ , դասագիրք, Գունավոր մատիտներ ,տարբեր առարկաներ

Կիրառվող մեթոդներ՝

- մտագրոհ ,
- Խմբային աշխատանք

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ՝ 7-10րոպե

Հարցերի միջոցով որոշել թե անտառում ինչ կենդանիներ են ապրում ,Այնուհետև դիտել սահիկաշարը և անվանել կենդանիներին ՝արջ, աղվես նապաստակ սկյուռ,թռչուններին ՝հոպոպ,կաչաղակ։Ապա երեխաների ուշադրությունն ուղղել նկարին. հարցնել թե ինչ են տեսնում բացի կենդանիներից /թվարկել այն ամենը ինչ կա նկարում (Ինչպիսին են ծառերը)։

Իմաստի ընկալման փուլ՝ 15րոպե

Կարդալ քառատող ՝
Ես կաղնին եմ հաստաբուն ,
Հաստանում եմ օրն ի բուն ,
Իսկ ես բարդին եմ բարակ
Սլացիկ եմ ու հպարտ։

Հարցերի միջոցով նկարագրել կաղնուն և բարդուն ՝ձևավոնել գիտելիքներ հաստ և բարակ հասկացությունների մասին։ Ցույց տալ կաղնու և բարդու նկարներ ։ Որորոշել որի բույնն է հաստ որինը՝ բարակ։Համեմատել նաև այլ առարկաներ (գիրք ,տետր)։Ընթերցել դասի նկար -պատմությունը ։

Ֆիզկուլտդադար՝ 5րոպե

Երեխաները շրջան են կազմում երբ ուսուցիչ ասում է բարդի երեխաները խտանում են իսկ երբ ասում է կաղնի երեխաները բացազատվում են ։

Խաղը շարունակում ենք նաև անհատական ։

Կշռադատման փուլ՝ 10րոպե

Դասարանը բաժանել 2 խմբի հաստ և բարակ թիմերի ։Յուրաքանչյուր թիմ իր անվանը համապատասխանող առարկաներ է գտնում ընդհանուր արկղի միջից ,դասավորում իր թիմային արկղի մեջ։

Արդյունքներն ամփոփվում են որի հիման վրա էլ երեխաները գնահատում են մեկմեկու, իսկ ուսուցիչը խրախուսում է բոլորին։

Տնայի աշխատանք՝

Կատարել աշատանքային տետրում տրված համապատասխան առաջադրանքը ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելով թեմայի շուրջ համապատասխան գրականության վերլուծություն, հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1.Անկախ այն հանգամանքից, թե ուսուցման որ մակարդակում է գտնվում աշակերտը պետք է արժևորել ուսուցանվող նյութը, չմոռանալով նաև, որ հենց նախաայբբենական շրջանից է սկսվում արդյունավետ ուսուցումը, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հստակ գիտակցի այս շրջանի կարևորությունը։

2. Նախաայբբենական փուլը հիմք է հանդիսանում հետագա ուսուցման արդյունավետության համար։ Ինչպես տունը չի կարող լինել առանց հիմքի և հենասյունի, այնպես էլ մայրենի լեզվի ուսուցումը և հատկապես տառաճանաչությունն ու գրաճանաչությունը չեն կարող լինել առանց նախաայբբենական շրջանի։

3. Ուրաքանչյուր ուսուցիչ պետք է ուշադիր լինի այս շրջանում։ Հստակ ուշադրություն դարձնելով նպատակներին, խնդիրներին, գործողությունների ընթացքին, վերջնաարդյունքներին և սրանց ամբողջությանը, որ հիմք է դնում գրագետ, համակողմանի, զարգացած աշակերտների ձևավորմանը ։ Կախված այն հանգամանքից, թե աշակերտները ինչպես են յուրացրել նախաայբբենական շրջանը կարող ենք ասել, որ ունենք մեր վերջնաարդյունքների տեսլականը։

Եվ միայն ուսուցչի նախապես պլանավորված, ճիշտ նպատակադրված և հստակ գործողությունների արդյունքում է, որ ձևավորվում են գեղեցիկ խոսք, հարուստ և ճկուն բառապաշար ունեցող, լայն մտահորիզոնով ոսկե սերունդ, ով կլինի յրաքանչյուր ազգի պարծանքն ու հպարտությունը ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի Զարգացում, բուհական ձեռնարկ, Եր., 2014:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015:
3. Էդիլյան Գ., Գիտությունը և դպրոցական պարապմունքների նպատակները, Արարատ, 1913:
4. Մանդինյան Ա., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար, Թիֆլիս, 1876: